

2017 թվականի ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդի 2017 թվականի տարեկան հաշվետվություն

2017 թվականի փետրվարի 17-ի նիստում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանն ամփոփ տեղեկատվություն է ներկայացրել հանրապետությունում գործող բոլոր մարզադպրոցների գերատեսչական պատկանելության, կարգավիճակի և այնտեղ իրականացվող ուսումնամարզական գործընթացների վերաբերյալ: Նշվել է, որ բոլոր մարզադպրոցներում ուսումնամարզական պրոցեսները պետք է իրականացվեն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վերահսկողությամբ:

Ելույթ են ունեցել Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի դասախոս Հարություն Բաբայանը ՀՀ բազկամարտի ֆեդերացիայի նախագահ Արսեն Գաբրիելյանը, «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Գևորգ Սիմոնյանը, Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ միություն» ՀԿ նախագահ Հակոբ Աբրահամյանը, Գյուրու «Երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Մակարյանը: Որոշվել է պատրաստել համապատասխան իրավական փաստաթուղթ՝ խնդրին օրենսդրական լուծում տալու նպատակով: Միաժամանակ որոշվեց, երկշաբաթյա ժամկետում գրավոր ներկայացնել դաշտի կարգավորման կոնկրետ առաջարկություններ:

Նույն նիստում խաղային մարզաձևերով մարզվելու համար համապատասխան բազաներ չունեցող մարզադպրոցների կողմից հանրակրթական դպրոցների մարզադահլիճների օգտագործման առիթով առաջացող խնդիրների մասին տեղեկատվությունը ներկայացրել է «Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Գևորգ Սիմոնյանը:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Արշամ Սարգսյանը: Որոշվել է պատրաստել համապատասխան գրության՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնապես դիմելու և հարցին հնարավոր օպտիմալ լուծում տալու համար:

2017 թվականի ապրիլի 26-ի նիստում Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» հասարակական կազմակերպության անդամ Գոհար Նավասարդյանը խոսել է հաշմանդամության ունեցող մարզիկների մարզումները կազմակերպելու նպատակով 10 մարզիչների հաստիքներ տրամադրելու անհրաժեշտության մասին:

Ելույթ են ունեցել Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը, «Մեդիամաքս» լրատվական գործակալության լրագրող Գոհար Նալբանդյանը: Որոշվել է առաջարկել Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» հասարակական կազմակերպությանը ներկայացնել 10 մարզիչների հաստիքները տրամադրելու անհրաժեշտությունը հիմնավորող առաջարկությունների փաթեթ:

Նույն նիստում պարտադիր զինվորական ծառայության ենթակա բարձրակարգ մարզիկների զորակոչը կազմակերպելու և ծառայության ընթացքում մարզումներին ու մրցումներին նրանց մասնակցությունն ապահովելու մասին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի և ՀՀ պաշտպանության նախարարների համատեղ հրամանների վերաբերյալ իր նկատառումներն է ներկայացրել «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արշամ Սարգսյանը:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «ՖԻՄԱ» ՀԿ-ի նախագահ Խաչիկ Հարությունյանը: Որոշվել է մշակել բարձրակարգ մարզիկների մարզական գործընթացն ապահովելու վերաբերյալ համապատասխան իրավական փաստաթղթի նախագիծ՝ այդ նպատակով սերտորեն համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության հետ:

2017 թվականի դեկտեմբերի 5-ի նիստում «Գյումրու երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Մակարյանը խոսել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչությունների և բաժինների երիտասարդական ոլորտի մասնագետների վերապատրաստման անհրաժեշտության մասին, ինչը մեծապես կնպաստի երիտասարդական պետական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը: Որոշվել է մշակել համապատասխան իրավական փաստաթուղթ, որը հնարավորություն կտա տեղական ինքնակառավարման

մարմիններում ունենալ երիտասարդության հարցերով զբաղվող առանձին մասնագետ:

«Գյուճարու երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Մակարյանը հասարակական խորհրդի անդամների քննարկմանն է ներկայացրել համայնքային ենթակայության երիտասարդական կենտրոնների՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային ծրագրերի շահառու դառնալու հնարավորությունները:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանը, «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ նախագահ Արշամ Սարգսյանը: Որոշվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդամենը երկու համայնքային ենթակայության երիտասարդական կենտրոններ, սկսել քննարկումներ՝ դրանց հատուկ կարգավիճակ սահմանելու հնարավորությունների վերաբերյալ կամ վերջիններիս հնարավորություն տալ հանդես գալ որպես համահայտատու դրամաշնորհային ծրագրերի համար:

Նիստում ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Լալայանի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հարություն Բաբայանը խոսել է Հայաստանի Հանրապետության մարզադպրոցներում և հավաքական թիմերի սպորտային պատրաստության գործառույթներում սպորտի ոլորտում գիտական ձեռքբերումների գործնական ներդրման ակտիվացման, ինչպես նաև սպորտային բժշկության, և սպորտային հոգեբանության ոլորտների մասնագետների որակավորման դասընթացների կազմակերպման մասին:

Ելույթ են ունեցել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը, «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանը: Որոշվել է քննարկել գիտա-մեթոդական խորհուրդ ստեղծելու հնարավոր ուղղությունները՝ այդ աշխատանքներում ներգրավելով համապատասխան ոլորտների առաջատար փորձագետներին: